ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1146-11015

Ք. Երևան «02» փետրվար 2026 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն՝ Արման Սարգսյանի, (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 1146«Հանրակրթության ծրագիր» ծրագրի 11015«Դպրոցականների օլիմպիադաների անցկացում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **71 000 000** (յոթանասունմեկ միլիոն) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ պայմանագրի 5.3 կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարման դեպքում պահանջել հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնել հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնել ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարումը,

2.1.7. սույն պայմանագրի 2.4.7 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.1.8. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջել վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կազմակերպությունից ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման կազմակերպությանը՝ լրամշակման համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.2 կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել գործող իրավական ակտերի, պետական մարմնի կողմից հաստատված կամ տրամադրված մեթոդական ցուցումների, հրահանգների պահանջներին համապատասխան,

2.4.4. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.7. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար,

2.4.8. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.9. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.10. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում, ինչպես նաև ծրագրի իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ

բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.12. միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունների ձեռքբերումն իրականացնել աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և/կամ ՀՀ աշխատաքային օրենսգրքով սահմանված սահմանված կարգով,

2.4.13. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2026 թվականի դեկտեմբերի 25-ը, իսկ ժամանակացույցով պայմանավորված ավելի ուշ ավարտվող միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումից հետո,

2.4.14. պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում համապատասխան չափով գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը պետական մարմինը կազմակերպությանն է վճարում համաձայն ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան՝ սույն պայմանագրի 2.4. կետում նշված հաշվետվությունն ընդունելուց հետո:

3.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը վճարվում է կազմակերպության բանկային հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3 Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

6.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

6.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

6.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

6.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

6.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են

երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարական 2 շենք	ք. Երևան, Ազատության պողոտա 2-րդ նրբ. հ.9
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005163	Հ/Հ 900018001835
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 00801524
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Հ. Հակոբյան	_____ Ա.Սարգսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված

2026 թ.փետրվարի 2-ին

կնքված N 1146-11015 պայմանագրի

2026 թվականի դպրոցականների առարկայական հանրապետական և միջազգային օլիմպիադաների միջոցառումներ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը ՀՀ դրամ
1	Դպրոցականների օլիմպիադաների անցկացում /ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 5-ի N 280-Ն /փոփոխություն 01.12.2024թ., հր. 78-Ն/ հրամանով հաստատված « ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման » կարգ/	Դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների **դպրոցական փուլի** օնլայն կազմակերպում տասնվեց առարկաներից:	-2025թ. դեկտեմբերին անցկացված դպրոցական փուլի առարկաների պատասխանների թերթիկների հավաքագրում և ստուգում համապատասխան հատուկ ծրագրի և սարքերի /պատճենամուտ/ միջոցով: - ստուգման արդյունքների ամփոփում և հրապարակում www.olymp.am կայքում, - առաջին փուլի արդյունքների մշակում ըստ մարզերի և միավորների, - 2026-2027 ուստարվա հանրապետական առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի ՀՀ բոլոր դպրոցների մասնակիցների ցուցակների հավաքագրում և հրապարակում www.olymp.am կայքում /մոտ 100000 աշակերտ/, -պատասխանների թերթիկների տպագրություն /մոտ 100000 հատ/ և առաքում դպրոցներ, -հանձնաժողովների նախագահների կողմից կազմած առաջադրանքները ընթացակարգով սահմանված օրերին՝ օլիմպիադան սկսելուց մեկ ժամ առաջ, տրամադրում մարզային ներկայացուցիչներին,	Շնորհալի և ստեղծագործ կարողություններով օժտված աշակերտների հայտնաբերում, նրանց մոտ ուսումնական առարկաների նկատմամբ լրացուցիչ հետաքրքրությունների առաջացում, մասնագիտական կողմնորոշման խթանում:	ըստ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի	4 100 000
2	Մարզային փուլի կազմակերպում	Դպրոցականների առարկայական	- 2025-2026 ուստարվա առարկայական հանրապետական օլիմպիադաների մարզային			2 690 000

		հանրապետական օլիմպիադաների **մարզային փուլի** կազմակերպում 16 առարկաներից:	փուլի մասնակիցների ցուցակների հրապարակում www.olymp.am կայքում, -կենսաբանություն առարկայի և մաթեմատիկա առարկայի 5-7-րդ դասարանների մարզային փուլի մասնակիցների օնլայն անցկացվող օլիմպիադաների պատասխանների թերթիկների առաքում մարզային ներկայացուցիչներին, -հանձնաժողովների նախագահների կողմից կազմած առաջադրանքները ընթացակարգով սահմանված օրերին՝ օլիմպիադան սկսելուց մեկ ժամ առաջ, տրամադրում մարզային ներկայացուցիչներին, - կենսաբանություն առարկայի և մաթեմատիկա առարկայի 5-7-րդ դասարանների պատասխանների թերթիկների հավաքագրում և ստուգում համապատասխան հատուկ ծրագրի և սարքերի /պատճենամուտ/ միջոցով, - մարզային փուլի արդյունքների հավաքագրում, -երկրորդ փուլի արդյունքների մշակում ըստ մարզերի և միավորների, -արդյունքների հրապարակում www.olymp.am կայքում:		ըստ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի	
3	Հանրապետական փուլի կազմակերպում	Դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների **հանրապետական փուլի** կազմակերպում 15 առարկաներից:	- 2025-2026 ուստարվա հանրապետական օլիմպիադաների 15 առարկաների հանրապետական փուլի մասնակիցների ցուցակների հրապարակում www.olymp.am կայքում, -հանձնաժողովների նախագահների կողմից կազմած առաջադրանքների տրամադրում օլիմպիադայի պատասխանատուներին ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանված օրերին, -հանրապետական փուլի արդյունքների մշակում ըստ առարկաների և միավորների, -արդյունքների հրապարակում www.olymp.am կայքում,	Առարկայական հանձնաժողովների գնահատման հիման վրա լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտներին ՀՀ ԿԳՄՍ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով պարգևատրում:	ըստ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի	13 000 000

			-օլիմպիադաների անցկացման համար համապատասխան տարածքների և գրենական պիտուքների ապահովում, - մարզերից եկած մասնակիցների գիշերակացի կազմակերպում և անվտանգության ապահովում, - օլիմպիադայի մասնակիցների սննդի կազմակերպում, ընդ որում՝ -գիշերակացից օգտվող մասնակիցների համար օրը չորս անգամ, մյուս մասնակիցների համար երկու անգամ, - օլիմպիադաների անցկացման ընթացքում սենյակներում հսկիչ-կազմակերպիչների ապահովում /յուրաքանչյուր 30 մասնակցի համար 1 հսկիչ- կազմակերպիչ հաշվարկով/, -ծածկագրված տետրերի և գրիչների տրամադրում, -առարկայական հանձնաժողովների կողմից հաղթող ճանաչված մասնակիցներին ԿԳՄՍ նախարարի կողմից դիպլոմ-գովասանագրերի տրամադրում, - քիմիա և կենսաբանություն առարկաների փորձարարական փուլի համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում, -հանձնաժողովների անդամների և գիշերող մասնակիցների տրանսպորտային տեղափոխման կազմակերպում, -առարկայական հանձնաժողովների անդամների աշխատավարձի վճարում /յուրաքանչյուր տետրի ստուգման համար առնվազն 3000 դրամ/, -հանձնաժողովների բնական գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ գրասենյակային տարածքներով ապահովում, սարքեր-սարքավորումների, գրասենյակային և այլ նյութերի ու պարագաների տրամադրում:			
4	Միջազգային	ՀՀ առարկայական	-հանրապետական փուլի 10-12-րդ դասարանների		15.08.2026թ.	2 100 000

	թիմերի ձևավորում և նախապատրաստում	միջազգային թիմերի նախապատրաստում /Միջազգային թիմերի հավակնորդների հետ լրացուցիչ պարապմունքների կազմակերպում և միջազգային օլիմպիադաների մասնակիցների ընտրություն/:	դիպլոմակիրների հետ լրացուցիչ պարապմունքների անցկացում, -միջազգային օլիմպիադաների յոթ թիմերի ձևավորում, -միջազգային օլիմպիադաների թիմերի հետ լիացուցիչ պարապմունքներ կազմակերպած մասնագետների վարձատրություն յուրաքանչյուր առարկաների հաշվարկով 2 ամիս, ամսական 150000-ական դրամ/:			
5	Միջազգային օլիմպիադաներին ՀՀ թիմերի մասնակցության կազմակերպում:	Միջազգային օլիմպիադաներին ՀՀ թիմերի մասնակցության կազմակերպում:	- Միջազգային օլիմպիադաներին ՀՀ թիմերի մասնակցության ապահովում, - միջազգային օլիմպիադաների մասնակից ՀՀ թիմերի ավիատոմսերի, վիզաների, բուժապահովագրության ձեռքբերում, -մասնակցության վճարների տրամադրում: -օրապահիկի տրամադրում:	- միջազգային օլիմպիադաներին ավելի արդյունավետ մասնակցություն, - ձեռք բերված արդյունքների համեմատում նախորդ տարիների արդյունքների հետ, - հաղթող մասնակիցների հետ պարապմունքներ անցկացնող մասնագետների խրախուսում:	ըստ միջազգային առարկայական կազմկոմիտեների հաստատած ժամանակացույցի	30 110 000
6	Առարկայական օլիմպիական խմբակների կազմակերպում	Միջազգային օլիմպիադաների յոթ առարկաներից հանրապետական փուլի դիպլոմակիրների հետ խմբակների կազմակերպում	-2025-2026թթ. 10-12-րդ դասարանների մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, աստղագիտություն և ինֆորմատիկա առարկաների հանրապետական փուլի դիպլոմակիրների անվանացանկի հրապարակում, -նրանց հետ ութ ամիս առկա կամ օնլայն պարապմունքների կազմակերպում, - պարապմունքների անցկացման սենյակների և օնլայն կազմակերպման անհրաժեշտ սարքերի ապահովում, - խմբավարների վարձատրություն:	-Դիպլոմակիր աշակերտների հետ մշտական աշխատանքի կազմակերպում, -նրանց մոտ օլիմպիական որակների բարձրացում,		13 000 000
7	olymp.am կայքի վարում	olymp.am կայքի վարում,	-olymp.am կայքի թարմացում, օլիմպիադաների մասին տեղեկությունների, արդյունքների,	Օլիմպիադաների նկատմամբ աշակերտների մոտ	30.12.2026թ.	3 120 000

		համացանցի օգտագործմամբ հանրապետական օլիմպիադաների աշխատանքների կազմակերպում և այլն	հայտարարությունների տեղադրում, - առարկայական օլիմպիադաների առաջին և երկրորդ փուլերի կազմակերպում համացանցի օգտագործմամբ՝ ապահովելով աշակերտների զանգվածային մասնակցություն, -միջազգային օլիմպիադաների մասին բազմակողմանի տեղեկությունների ապահովում, -օլիմպիադաների բոլոր փուլերի արդյունքների մշակում, -համեմատական վերլուծությունների կատարում, - Հանրապետական և միջազգային օլիմպիադաների մասին ամբողջական տեղեկատվությունների /ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններ, ընթացակարգեր, տարբեր փուլերի մասնակիցների անուններ, առաջադրանքներ և պատասխաններ, արդյունքներ, դիպլոմակիրներ, միջազգային օլիմպիադաների ՀՀ թիմեր, անցկացման վայրեր և ժամկետներ/ տեղադրում olymp.am կայքում:	հետաքրքրությունների ստեղծում և զարգացում: Հանրապետական և միջազգային օլիմպիադաների մասին լիարժեք տեղեկությունների ապահովում:		
8	1-7 կետերի աշխատանքների կազմակերպում	1-7 կետերի աշխատանքների կազմակերպում	-1-7 կետերի աշխատանքների կազմակերպում, անհրաժեշտ նյութերի, սարքավորումների և ծառայությունների ձեռքբերում, համապատասխան պայմանագրերի կնքում, - առարկայական օլիմպիադաների խնդրագրքերի և գրքույկների հրատարակում, -հաշվետվությունների ներկայացում:	Աշխատանքների անթերի կազմակերպում: Հաշվետվությունների և վերլուծական աշխատանքների արդյուքում օլիմպիական գործընթացի շարունակականու-թյան արդյունավետության ապահովում: Առարկայական օլիմպիադաների գրքույկների հրատարակում:	30.12.2026թ.	2 880 000
Ընդամենը՝	Յոթանասունմեկ միլիոն դրամ				71 000 000 դր.	

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005163
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Ազատության պողոտա 2-րդ նրբ. հ.9
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001835
ՀՎՀՀ 00801524

Տնօրեն՝

Ա.Սարգսյան

(ստորագրություն)

Կ.Տ.